ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-16/16

ք. Երևան -09- օգոստոսի 2016թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ի. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տուրիզմ և Իվենթ Լոջիսթիքս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Նազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Եվրոպայի խորհրդի «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործման ազգային քաղաքականություններ, մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով միջազգային 18-րդ համաժողովի հետ կապված ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **9 744 000 (Ինը միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	«Տուրիզմ և Իվենթ Լոջիսթիքս» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3	ք. Երևան, Միկոյան 5/50
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 2500010030120100
Հ/Հ 900011014405	ՀՎՀՀ 00868562
ՀՎՀՀ 02565827	
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Է. Գևորգյան ----------	Ա.Նազարյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
...09... օգոստոսի 2016թ. կնքված ՔՆ-ԲԸԱՀՇՁԲ-16/16
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
Եվրոպայի խորհրդի «Լանզշֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործման ազգային քաղաքականություններ. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով 18-րդ Համաժողովի հետ կապված ծառայությունների ձեռքբերման

2016 թվականի հոկտեմբերի **5**-ից **7**-ը
Երևան, Հայաստանի Հանրապետություն

.....հյուրանոցի նիստերի դահլիճ

Հոկտեմբերի 5
9.00-13.00 Համաժողովի բացում, 1-ին նիստ
Համաժամանակյա թարգմանություն՝ հայերեն-անգլերեն-հայերեն
Համաժամանակյա թարգմանություն՝ հայերեն-ֆրանսերեն-հայերեն
Համաժամանակյա թարգմանություն՝ անգլերեն-ֆրանսերեն
11.00-11.30 Սուրճի ընդմիջում 140 հոգու համար
13.00-14.00 Ճաշի ընդմիջում 120 հոգու համար
14.00-18.00 Համաժողովի 2-րդ նիստ
16.00-16.30 Սուրճի ընդմիջում 140 հոգու համար
18.00 Համաժողովի 2-րդ նիստի ավարտ
20.30-23.00 Պաշտոնական ճաշ նախարարի անունից 120 հոգու համար
Բանավոր թարգմանություն պաշտոնական ճաշի ընթացքում

Հոկտեմբերի 6
9.00-12.30 Համաժողովի 3-րդ նիստ
Համաժամանակյա թարգմանություն՝ հայերեն-անգլերեն-հայերեն
Համաժամանակյա թարգմանություն՝ հայերեն-ֆրանսերեն-հայերեն
Համաժամանակյա թարգմանություն՝ անգլերեն-ֆրանսերեն
10.30-11.00 Սուրճի ընդմիջում 140 հոգու համար
12.30-14.00 Ճաշի ընդմիջում 120 հոգու համար
14.00-18.00 Համաժողովի 4-րդ նիստ,
16.00-16.30 Սուրճի ընդմիջում 140 հոգու համար
18.00 Համաժողովի փակում

Հոկտեմբերի 7
Մշակութային միջոցառումներ
09.00-21.00 Համաժողովի մասնակիցների մեկնում Երևան-Դիլիջան-Երևան (110 հոգի,3 ավտոբուս)
Այցելություն Դիլիջանի միջազգային դպրոց (UWC Dilijan College),
Դիլիջանում ԿԲ-ի մասնաճյուղ, պատմամշակութային վայրեր
16.00-18.00 Ճաշ Դիլիջանում
Բանավոր թարգմանություն(3 թարգմանիչ)

Սարքավորումների վարձակալություն
Համաժամանակյա թարգմանությունների սարք 140 հոգու համար (2 օրվա համար, կոնֆերանս համակարգ, եռալեզու, ականջակալներ, միկրոֆոններ)
Անվանապաստառ 2x3 մ նիստերի դահլիճում տեղադրելու համար
Համակարգիչ, տպիչ, բազմացնող սարք 2 օրվա համար

Այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր
Անվանակ (Badges) 140 հոգու համար
Աշխատանքային նյութերի գունավոր տպագրում և լրակազմում (ծրագիր 22 էջ 140 հոգու համար, գեկույցներ և այլ)
Թղթապանակներ (նոթատետր, գրիչ, աշխատանքային նյութեր) - 140 հատ
Լուսանկարահանում
Հիշողության քարտ աշխատանքային նյութերով, լուսանկարներով 100 հոգու համար
Հուշանվերներ պատվիրակությունների անդամների համար - 100 հատ
Ծառայության մատուցման ժամկետը.
Սկիզբ-Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը
Ավարտ- 2016 թվականի հոկտեմբերի 10-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011014405
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝
Է. Գևորգյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Տուրիզմ և Իվենթ Լոջիսթիքս» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 5/50
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010030120100
ՀՎՀՀ 00868562

Տնօրեն՝
Ա.Նազարյան
(ստորագրություն)

Հավելված 1.1
...09... օգոստոսի 2016թ. կնքված ՔՆ-ԲԸԱՀՇՁԲ-16/16
ծածկագրով գնման պայմանագրի

Գնացուցակ

Եվրոպայի խորհրդի «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործման ազգային քաղաքականություններ, մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով միջազգային 18-րդ համաժողովի հետ կապված ծառայությունների

(Հազ. դրամ)

	Ծառայության անվանումը		*Առաջարկվող ընդհանուր գինը յուրաքանչյուր ծառայության համար*
1	Դահլիճի (նախատեսված առնվազն 140 մասնակիցների համար) վարձակալության ծախս		580.0
2	Համաժամանակյա թարգմանությունների սարք (կոնֆերանս համակարգ, նռալեզու, ականջակալներ, միկրոֆոններ), համակարգիչ, տպիչ, բազմացնող սարք		685.0
3	Սննդի ծախսեր	ճաշ	2800.0
		պաշտոնական ճաշ	1500.0
		սուրճի ընդմիջում	840.0
4	Թարգմանչական ծառայությունների վճար	սովորական թարգմանություն	340.0
		համաժամանակյա թարգմանություն	1320.0
5	Հուշանվերներ՝ հայկական խորհրդանիշով		1000.0
6	Լուսանկարահանում		40.0
7	Մշակութային միջոցառումներ		220.0
8	Անվանապաստառ, անվանակ (Badges), աշխատանքային նյութերի գունավոր տպագրում և լրակազմում, թղթապանակներ (նոթատետր, գրիչ, աշխատանքային նյութեր)		230.0
9	Հիշողության քարտ աշխատանքային նյութերով, լուսանկարներով		189.0
Ընդամենը			9744.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011014405
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավար՝
Է. Գևորգյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Տուրիզմ և Իվենթ Լոջիսթիքս» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 5/50
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010030120100
ՀՎՀՀ 00868563
Տնօրեն՝
Ա.Նազարյան
(ստորագրություն)

Հավելված 2
09 օգոստոսի 2016թ. կնքված ՔՆ-ԲՀԱՇՁԲ-16/16
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 01, խումբ 01, դաս 03, ծրագիր 03)

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Եվրոպայի խորհրդի «Լանզշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործման ազգային քաղաքականություններ. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով 18-րդ Համաժողովի հետ կապված ծառայություն										9 744 000	9 744 000	9 744 000	**9 744 000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011014405
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավար՝
Է. Գնորգյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Տուրիզմ և Իվենթ Լոջիսթիքս» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 5/50
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010030120100
ՀՎՀՀ 00868562
Տնօրեն՝
Ա.Նազարյան
(ստորագրություն)

Հավելված 3
...09... օգոստոսի 2016թ. կնքված ՔՆ-ԲԸԱՀՇՁԲ-16/16
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011014405
ՀՎՀՀ 02565827

Պատվիրատու
«Տուրիզմ և Իվենթ Լոջիսթիքս» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 5/50
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010030120100
ՀՎՀՀ 00868562

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության խորհրդատու Ա. Հովսեփյանի և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
...09... օգոստոսի 2016թ. կնքված ՔՇ-ԲԸԱՀՇՁԲ-16/16
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները:

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախազծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ազգանուն, անուն

ստորագրություն